# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*11 ՄԱՐՏԻ 2025թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 50-Ա

### ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ՀԵՆՐԻԿ ԱՐԳԱՄԻ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ, ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՅՔ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,0700 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված «Անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեեստրի ստեղծման և վարման կարգի» հիմքով և հիմք ընդունելով քաղաքացու դիմումը՝ (մտից Ս-10, 11.03.2025թ),

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝

1.Վայք համայնքի բնակիչ, Հենրիկ Արգամի Սաղաթելյանին սեփականության իրավունքով պատկանող, Վայք համայնքի Վայք քաղաքում գտնվող, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության, 0,0700 հա մակերեսով, 10-003-0041-0006 կադաստրային ծածկագրով հողամասը հասցեավորել՝ Վայք համայնք, քաղաք Վայք, Արգամի փողոց, 9 հողամաս և ներկայացնել իրավունքի պետական գրանցման:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ**
**ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*11 ՄԱՐՏԻ 2025թ.*

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 51-Ա

## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՍԱՐԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 5,46641 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՐՈՏԱՎԱՅՐԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 97-րդ հոդվածով,

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝

1.Վայք համայնքի սեփականություն հանդիսացող, Սարավան բնակավայրում գտնվող 5,46641 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության, 10-039-0307-0057 կադաստրային ծածկագրով հողամասը, հողատեսքը՝ արոտավայր, ճանաչել որպես առանձին միավոր, համայնքային սեփականություն և ներկայացնել իրավունքի պետական գրանցման. Հաշվառման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2025MFNTQC:
2.Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի տարածքային ստորաբաժանման կողմից:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*12 ՄԱՐՏԻ 2025թ.*

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 52-Ա

## ՎԱՅՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԲԱԺՆԻ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 3–րդ և 10-րդ հոդվածի 1-ին մասերով, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2025 թվականի մարտի 7-ի N 403-Ա հրամանով,

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2008 թվականի դեկտեմբերի 4-ի N 04-Ն հրամանով հաստատված համայնքային ծառայության պաշտոնների յուրաքանչյուր խմբի յուրաքանչյուր ենթախմբի ընդհանուր նկարագրի հիման վրա հաստատել ՀՀ Վայոց ձորի մարզի Վայքի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում կատարված լրացումներին համապատասխան և ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2025թ. մարտի 7-ի թիվ 403-Ա հրամանով հաստատված համայնքային ծառայության պաշտոնների յուրաքանչյուր խմբի ընդհանուր նկարագրի հիման վրա, աշխատակազմի զարգացման ծրագրերի, սոցիալական աջակցության և առողջապահության հարցերի բաժնի առաջատար մասնագետի /պաշտոնի ծածկագիր 3.1-12/ պաշտոնի անձնագիրը, համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

13 ՄԱՐՏԻ 2025թ.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 53-Ա

## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՋԱՌԻԹԱՓ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 448,26 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՊԱՀԵՍՏԱՐԱՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԸ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգին համապատասխան,

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝

1. Վայք համայնքի Ջառիթափ բնակավայրում գտնվող, «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ին պատկանող, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, 448.26 քմ մակերեսով պահեստների գործառնական նշանակության տարածքը, որի սպասարկման համար առանձնացված հողամասը կազմում է 0.3 հա, հասցեավորել՝ Վայք համայնք, գ. Ջառիթափ, 25-րդ փողոց, 1-ին փակուղի, 5 պահեստ (վկայական՝ N 12022025-10-0022):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*13 ՄԱՐՏԻ 2025թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 54-Ա

## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՋԱՌԻԹԱՓ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 1,0 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՅԼ ՀՈՂԱՏԵՍՔԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 97-րդ հոդվածով,

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝

1.Վայք համայնքի սեփականություն հանդիսացող, Ջառիթափ բնակավայրում գտնվող 1,0 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության, 10-022-0238-0000 կադաստրային ծածկագրով հողամասը, հողատեսքը՝ այլ, ճանաչել որպես առանձին միավոր, համայնքային սեփականություն և ներկայացնել իրավունքի պետական գրանցման. Հաշվառման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2025KTD9RB:
2.Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի տարածքային ստորաբաժանման կողմից:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ**
**ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*13 ՄԱՐՏԻ 2025թ.*

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ № 55-Ա

## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 22.10.2024 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 317-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածով.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ   Ե Մ՝

1.Վայք համայնքի ղեկավարի 22.10.2024 թվականի թիվ 317-Ա «Վայք համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային (պետական) սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդային կարգով օտարելու նպատակով աճուրդային հանձնաժողով ստեղծելու և համայնքի ղեկավարի 4-ը նոյեմբերի 2022 թվականի թիվ 218-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» որոշման բովանդակության 1-ին կետում գրված «Շմավոն Ազատյան/Վայքի համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ/» բառերը փոխարինել «Մեսրոպ Մեսրոպյան /Վայք համայնքի ղեկավարի օգնական/» բառերով, և նույն կետում գրված «Գարիկ Գևորգյան /Վայքի համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջատար մասնագետ /» բառերը փոխարինել «Գարիկ Գևորգյան /Վայքի համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ/» բառերով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ**
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*14 ՄԱՐՏԻ 2025թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 56-Ա

## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 06.03.2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 48-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 3-րդ մասով և 34-րդ հոդվածով.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1.Վայք համայնքի ղեկավարի 06.03.2025 թվականի թիվ 48-Ա «Վայք համայնքի Գոմք բնակավայրի 5-րդ փողոց, 19 հասցեում գտնվող անշարժ գույքը՝ հողամասը երկու առանձին գույքային միավորների բաժանելու և հասցեավորելու մասին» որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1.1 Որոշման բովանդակության 2-րդ կետում «0.66280» թվի փոխարեն գրել «0.066280»թիվը:

1.2 Որոշման բովանդակության մեջ ավելացնել նոր կետ, հետևյալ բովանդակությամբ՝ «Վայք համայնքի Գոմք բնակավայրի 5-րդ փողոցի 19 հասցեում գտնվող, քաղաքացի Ռոբերտ Իվանի Մինասյանին օրինական հատկացված 10-019-0023-0006 կադաստրային ծածկագրով 0.12800 հա մակերեսով հողատարածքին կից ավել օգտագործվող 0,06973 հա հողատարածքը հետ վերցնել և ճանաչել համայնքային սեփականություն»:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*14 ՄԱՐՏԻ 2025թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 57-Ա

## ՎԱՅՈՑ ՁՈՐ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 10.03.2022 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 57-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 41-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի ապրիլի 22-ի՝ «Քաղաքացիական պաշտպանության պլանների մշակման կարգը սահմանելու մասին» N 633-Ն որոշման հավելվածի 6-րդ կետի «է» ենթակետը և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով,

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝

1.Ուժը կորցրած ճանաչել Վայք համայնքի ղեկավարի 10.03.2022 թվականի «Վայոց ձորի մարզի Վայք համայնքի ղեկավարի 21.05.2018 թ. թիվ 76, նախկին Զառիթափ համայնքի ղեկավարի 30.01.2018 թ. թիվ 06 որոշումները ուժը կորցրած ճանաչելու և «Հայաստանի Հանրապետության Վայոց ձոր մարզի Վայք համայնքի քաղաքացիական պաշտպանության պլանը» հաստատելու մասին» թիվ 57-Ա որոշումը:

2.Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի քաղաքացիական պաշտպանության պլանը՝ ըստ կից հավելվածի:
3.Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*17 ՄԱՐՏԻ 2025թ.*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 58-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ «ՋԱՌԻԹԱՓԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՄԱՐ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի՝ «Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենի թափուր պաշտոն զբաղեցնելու մրցույթի նախապատրաստման, անցկացման և արդյունքների ամփոփման կարգը հաստատելու մասին» N 02-Ն հրամանով հաստատված հավելվածի 7-րդ կետի 5-րդ ենթակետը և համակարգչում զետեղված թեկնածուներից ընտրված հանձնաժողովի կազմը (անվանացանկ).

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի «Ջառիթափի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնի համար սույն թվականի մարտի 18-ին անցկացվող մրցույթի հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշման առաջին կետում նշված հանձնաժողովի քարտուղար նշանակել համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի առաջատար մասնագետ Մերի Ղամբարի Ղամբարյանին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզի
Վայք համայնքի ղեկավարի
2025 թվականի մարտի 17-ի
թիվ 58-Ա որոշման

**Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի «Զառիթափի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնի համար 2025 թվականի մարտի 18-ին անցկացվող մրցույթի հանձնաժողովի կազմը**

**Վահան Սերգեյի Աբրահամյան**

*Հաստատությունը'* **ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմ**
*Պաշտոնը'* **ՀՀ Վայոց ձորի մարզպետի խորհրդական**

**Վարդան Վիկտորի Հովհաննիսյան**

*Հաստատությունը'* **ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմ**
*Պաշտոնը'* **ՏԿ և ՏԻ հարցերի վարչության պետ**

**Մխիթար Կոլյայի Մաթևոսյան**

*Հաստատությունը'* **Վայքի համայնքապետարան**
*Պաշտոնը'* **Վայք համայնքի ղեկավար**

**Սուսաննա Աշոտի Կոստանդյան**

*Հաստատությունը'* **Վայք համայնքի ավագանի**
*Պաշտոնը'* **Ավագանու անդամ**

**Օֆելյա Հոբիկի Սաֆարյան**

*Հաստատությունը'* **Գիտական հաստատությունների ներկայացուցիչներ**
*Պաշտոնը'* **«Վայք համայնքի թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրեն**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*18 ՄԱՐՏԻ 2025թ.*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ № 59-Ա

## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 77-րդ հոդվածի 2-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածով և հիմք ընդունելով Վայք համայնքի տարածքում հողերի վարձակալության և կամ կառուցապատման մրցութային հանձնաժողովի 18.03.2025թ-ի թիվ 1 արձանագրությունը,

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝

1. Վայք համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող՝ համայնքի տարածքում հողերի վարձակալության տրամադրման մրցութային հանձնաժողովի կողմից ներկայացված ներքոհիշյալ հողամասերը վարձակալության իրավունքով տրամադրելու նպատակով հայտարարել մրցույթ, մրցույթի օր նշանակել սույն թվականի ապրիլի 21-ը:
1.1 Զառիթափ բնակավայրի տարածքում գտնվող 10-022-0238-0059 կադաստրային ծածկագրով, 5.9 հա մակերեսով, գյուղատնտեսական նպատակային նշանակության, արոտավայրը.
1.2 Զառիթափ բնակավայրի տարածքում գտնվող 10-022-0238-0060 կադաստրային ծածկագրով, 0.15433 հա մակերեսով, գյուղատնտեսական նպատակային նշանակության, արոտավայրը.
1.3 Հերհեր բնակավայրի տարածքում գտնվող 10-028-0149-0132 և 10-028-0167-0028 կադաստրային ծածկագրերով, 600.0հա և 230.0 հա մակերեսներով և Արին բնակավայրի տարածքում գտնվող 10-009-0110-0003 կադաստրային ծածկագրով, 0.18 հա մակերեսով, գյուղատնտեսական նպատակային նշանակության, այլ հողատեսքերը.
2. Հաստատել վարձակալության իրավունքով տրամադրման մրցույթի հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Հավելված
Վայք համայնքի ղեկավարի 18.03.2025 թ-ի
Թիվ 59-Ա որոշման

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Վայքի համայնքապետարանը հայտարարում է համայնքային սեփ. հանդիսացող ներքոհիշյալ հողամասերի վարձակալության մրցույթ՝

**ԼՈՏ 1.** Զառիթափ բնակավայրում գտնվող, գյուղ. նպ. նշանակության արոտավայրը /ծածկ՝10-022-0238-0059/, 5.9 հա , տարեկան վարձավճար՝ 100 000 ՀՀ դրամ (25 տարով):

**ԼՈՏ 2.** Զառիթափ բնակավայրում գտնվող, գյուղ. նպ. նշանակության, արոտավայրը /ծածկ՝10-022-0238-0060/, 0.15433 հա, տարեկան վարձավճար սահմանելով՝ 5000 ՀՀ դրամ (25 տարով):

**ԼՈՏ 3** Հերհեր և Արին բնակավայրերում գտնվող, գյուղ. նպ. նշանակության, այլ հողատեսքերը /ծածկագրեր՝ 10-028-0149-0132, 10-028-0167-0028, 10-009-0110-0003/, 600.0, 230.0, 170.0 հա, տարեկան վարձավճար սահմանելով մեկ հեկտարի համար՝ 3000 ՀՀ դրամ (5 տարով):

Մրցույթը տեղի կունենա 2025թ. ապրիլի 21-ին ժամը 11:00-ին Վայքի համայնքապետարանի շենքում: Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հայտ, 15 000 դրամի չափով վճարման անդորրագիր, անձնագիր, իրավաբանական անձանց համար՝ հիմնադիր փաստաթղթեր: Հայտերի ընդունումը դադարեցվում է մրցույթի կայացման օրվանից 3 օր առաջ: Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել Վայքի համայնքապետարան /հեռ. 098 992894/:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ**
**ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*19 ՄԱՐՏԻ 2025թ.*

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 60-Ա

## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ՀԵՆՐԻԿ ԱՐԳԱՄԻ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ, ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱՐՁՐՈՒՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,159 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված «Անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեեստրի ստեղծման և վարման կարգի» հիմքով և հիմք ընդունելով քաղաքացու դիմումը՝ (մտից Ա-18, 19.03.2025թ),

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1.Վայք համայնքի բնակիչ Սանասար Վազգենի Աբգարյանին սեփականության իրավունքով պատկանող, Վայք համայնքի Բարձրունի բնակավայրում գտնվող, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության, 0,159 հա մակերեսով, 10-013-0001-0013 կադաստրային ծածկագրով հողամասը հասցեավորել՝ Վայք համայնք, գ. Բարձրունի, 2-րդ փողոց, 5 հողամաս և ներկայացնել իրավունքի պետական գրանցման:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*19 ՄԱՐՏԻ 2025թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 61-Ա

## ՇՈՒՇԱՆԻԿ ԱՍԼԱՆՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ «ՁԱՌԻԹԱՓԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 24-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի՝ «Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենի թափուր պաշտոն զբաղեցնելու մրցույթի նախապատրաստման, անցկացման և արդյունքների ամփոփման կարգը հաստատելու մասին» N 02-Ն հրամանով հաստատված կարգի 72-րդ կետը, «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի «Ձառիթափի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի 2025 թվականի մարտի 18-ի N 2 որոշումը և մրցույթում հաղթող ճանաչված Շուշանիկ Վաչիկի Ասլանյանի դիմումը.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Սույն թվականի մարտի 19-ից Շուշանիկ Վաչիկի Ասլանյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի «Ձառիթափի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում:
2. Շուշանիկ Վաչիկի Ասլանյանի հետ կնքել աշխատանքային պայմանագիր 5 (հինգ) տարի ժամկետով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ